

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԻՏԻԿԱԼ

Տարեկան 12 ֆր.
Վեցամսեայ 6 «

ԱՐՏԱՍՈՒՄԱՆ

2 թիւ մէկ ծրարով
Տարեկան 14 ֆր.
Վեցամսեայ 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 տր.
Վեցամսեայ 1.50 »

ԿԱՆԽԻԿ

Փանուցման տոյր
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏՈՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՅՈՑԷ

Rédaction du journal

„Iravounk“

V A R N A (Bulgarie)

—o—

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

—o—

Դրուքիւնք ևս

չեն տուիր

ԱՆՃԱՍԿԱՑՈՂՈՒԹԵԱՆ ԵՐԶԱՆԸ

Շրջանին մէջ՝ ուրկէ կանցնի ազգը, անոր՝ ծայրայեղօրէն ցաւալի լքումովը Եւրոպական քրիստոնեայ պետութեանց կողմանէ, բնական էր որ ստեղծուէր անհասկացողութեան ներկայ թնկութեան, որ ամէն մարդ բնականօրէն մը ունենար հոն, առանց խտրութեան:

Դեռն ա՛լ հրեշտակն ա՛լ, խենդըն ա՛լ, խելօքն ա՛լ ունեային իրենց դերն ու պաշտօնը, որ կարելի ըլլար հոն արտառոց աշխատութեամբ մը, ցուցագրել համադրութիւնը գիրար չեզոքացնող խել մը աննպատակ շարժումներու որոնք աւա՛ղ, գոյութեան կռուին մէջ, չունենային ռազմական ու է լուրջ հանգամանք, ինչպէս որ պէտք էր:

Բնական էր՝ կրսնք, որ կղերն անգամ մոռնալ իր խաղաղասիրական երկնանուէր պաշտօնը և «ես Դաշնակցական եմ» չէ՛, ես ալ Հնչակեան եմ» ըսելով, տեղի տար անհունապէս ցաւալի պայքարին, որուն մէկ նմուշը՝ դեռ մօտիկ օրեր, կը հասնէր մեզ Ամերիկայէն՝ Մաշտոց-Մարդուկէսեան՝ որքան տխուր, նոյնքան և ծիծաղելի ծեծուղաւորութիւնը:

Բնական էր որ Տօն-Քիչոտը իր փայտէ սուրը քաշելով, հրամայէր Նիակարայի ջրվեժին, որ փոխէ տեղն ու ընթացքը, և կամ Դանուբի հոսանքներուն, որ գամուին մնան իրենց տեղը: Ու այս ցեասական հինաւորաց միաստութիւնը ծափելու չափ ապուշներ ալ գտնուէին, մեր ծովացւոց մեղքէն:

Բնական էր, որ խաչագործ քիթը տնկած, սպասէր նոր գիականութեան և կամ այն գաղափարին քմայքով, ինչով որ արեան ճապարհները փնտռած էր անիկա երկար տարիներ, նետուէր նոր բզկտուած երակներու վրայ ալ և մօրը կաթին պէս ծծէր ու ծծէր անոնց արեան յետին կաթիլը, շան մը չափ անկուշտ:

Բնական էր, որ խելօքներու թիւը հասնէր վիթխարի համեմատութեանց և ատոնց խելապատակին

հակայ չափուածին քով թզուկներ մնային Արարատն ու Ուրմալոս, իրենց է՛ն բարձրագոյն սարքն ու գազաթնեւորը: Քաղաքագէտ կը փնտռէ. հազարներ կը համարուին անոնք, որոնք կրնային, առիդար հպարտութեամբ մը, ուսուցիչները ըլլալ մինչեւ անգամ անցած դարու երկու ամենէն հոյակապ քաղաքագէտներուն, Պիզմարքի ու Քապուրի: Գրագէտ կուգին. օհօ՛... Եթէ կրնաս, համբէ ատոնց թիւը: Մուրատէն սկսած մինչեւ Մակարները բառին պուկարական առումովը:

Բնական էր, որ շիտկէ շիտակ ստորագրութիւն զննել չը գիտցողն անգամ ուզէր գրողի և կամ խորհողի կեանքը ապրիլ երազուն, և օր մըն ալ, իրաւցընէ ինքզինքը գրտնէր թայմի եզերքը, պատգամաւորներու կարմիր պատմուճանովը պծնազարդուած: Եւ հոն, այդ գրել, խօսիլ ու խորհիլ չը գիտցող հէ՛զ ու ցաւատունջ արարածին յանձնուէր ազգին ճակատագիրը վճռելու ահաւորութիւն խոշոր գործը:

Բնական էր, որ հարուստն ալ մեղք մեղքի վրայ դնէր և ուռնցնելով շուայտ կեանքի մը նկարուն անէքտօքներու ծրարը, տաք սենեակներու մէջ, իր նմաններուն առջեւ քակէր զայն, ու հրճուանքի աղաղակներ խլէր անոնցմէ յաղթականօրէն, ի հարկէ մոռնալով ազգ ու հայրենիք և ամեն հանրային պարտականութիւն:

Ու այս ահաւոր իրարանցումին մէջ, ի՛նչ կուգէիք որ ըլլար:

Բնական չէ՞ր միթէ, որ մէկը Միութիւն գոչած ատեն, միւսը պառակտում գոռար կակորդալի և ամեն յորժ գործ, ամեն փրկարար ձեռնարկ երթարկուէին տեսակ մը արտառոց հայածանքի, ուր անհասկացողութիւնը եղած ըլլար միակ ներդաշնակութիւնը բոլոր ունեւններուն:

Այս այսպէս է:

Եթէ խորհուրդի մը վրայ է գործը, ա՛ռ քեզի հիւսիսէն հարաւէն հազարաւոր քաղաքագէտներու փիլիսոփաներու պոռչտուք

ները, որոնք զիրար խաչելէ, զիրար հակասելէ զատ ուրիշ և ոչ մէկ առաւելութիւն կը ներկայացնեն:

Եթէ փարայի վրայ է խնդիրը — ա՛ռ մանաւանդ փարայի — ա՛ռ քեզի խաչագողին ցուկը, զոր օգին տուած «աղբար ի՛նչ ըսել է, փարան բանտէն կոր» կը պոռայ շնականօրէն ու ա՛լ ամեն սրբութիւն, ամէն պարկեշտութիւն մէկդի թողած, իր պառաւ ծածկիքներուն կուտայ հնարաւոր թափը աս ու ան խաճատելու համար... Եթէ բարձրագոյն պէտք անհարկօրէն:

Երբեք գաղափարի կռիւ, երբեք պարկեշտ խօսք: Միշտ անձնականութիւն, միշտ հայհայանք:

Ահա շրջանը, զոր կը բողբոջէ հիմակուհիմա դժբաղդարար:

ԴԵՍ ՈՒ ԴԵՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒԴՍՐՁԲ

Անցեալ շաբթու Պոլսէն հերոսական թերթերու հազորդուած էր ռուս դեսպանին Սուլթանին ըրած մէկ խիստ գիտողութիւնը՝ թէ բոլոր կայսրութեան մէջ բարենորոգումները պէտք է գործադրուին, հակառակ պարագային, սպառնալով որ, եթէ իրացարդի տխուր վիճակը չարունակուի, Աւստրիան Մակեդոնիոյ և Ռուսիան Հայաստանի պիտի միջամտեն:

Այս Պոլսական կարեւոր լուրը, որ կը թուի թէ շատ հաւաստի աղբիւրէ հասած է, թան և Ֆրանսիոյ Զայր. նոյնութեամբ հրատարակած էին, առանց անոր ստուգութիւնը կասկածի տակ դնող խօսք մը աւելցնելու իրենց կողմէ: Եւ նոյնիսկ լրատուն կաւելցնէր թէ Մակեդոնիոյ և Ալպանիոյ արդի կացութիւնը ընդհանուր խաղաղութեան վտանգը հետզհետէ կը ծանրացնէ. նոյնն է կրնանք ըսել Հայաստանի, Արարիոյ և նոյնիքն Պոլսոյ վիճակին համար ալ. հետեւապէս Մ. Չինովիէֆի գիտողութեան համեմատ բոլոր կայսրութեան մէջ բարենորոգմանց գործ

ծադրութիւնը անհրաժեշտ է: Մակայն դեսպանին կայսրութեան երկու մասերուն, Հայաստանի և Մակեդոնիոյ մէջ միայն միջամտութեան սպառնալիք ցոյց տալու պատճառը ուղղակի կը բղխի Պեւլինի դաշնագրին 23 և 61րդ յօդուածներու տրամադրութիւններէն: Այդ յօդուածներն են որ իրաւունք կուտան մեծ պետութեանց ուղղակի միջամտութեանը Հայաստանի և Մակեդոնիոյ ներքին գործերուն:

Առաջին ակնարկով քիչ մը տարօրինակ կը թուի թէ Ռուսիան ի՛նչպէս կը հանդուրժէ սլաւական երկիր մը համարուող Մակեդոնիոյ գործերուն միջամտութիւնը Աւստրիոյ վստահելու:

Բայց այս կէտն ալ շատ հեշտիւ կը պարզուի, երբ նկատենք թէ Մակեդոնիոյ մեծամասնութիւնը կազմող պուլկար և սերպ բնակչութիւնը, բացի իր ցեղային և կրօնական կապերէն, Սօֆիայի և Պելկրատի գաւառով Ռուսիոյ կապուած է սերտիւ. այնպէս որ եթէ աւստրիական բանակը օր մը Մակեդոնիա մտնելով ամբողջ տարիներ հոն մնայ, երկիրը բարեկարգելու պաշտօնով, Չարի կառավարութիւնը բնաւ վախ չունենար թէ քրիստոնեայ Մակեդոնացիք իրենց արդի ռուսասիրութենէն բան մը կորսնցնեն և կամ Աւստրիոյ քաղաքականութեան հակին: Ասկէ զատ, Մակեդոնիոյ սահմանագիւղերը մէկ կարգի վրայ զնն ի ձեռին սպասող ռուսական ոստիկանները, Պուլկարիա, Սերպիա և Մօնթէնէկրօ, անընդհատօրէն Մակեդոնացի քրիստոնէից պիտի մատակարարին ռուսասիրական յանկուցիչ գեղահատներ: Ուստի Ռուսիա ապահով կերպով կրնայ Մակեդոնիոյ միջամտութիւնը առայժմ Աւստրիոյ վստահիլ, որպէս զի միւս կողմէն, առանց դժուարութեան, ինք հայաստան մտնէ, բարենորոգումներու պատրուակով:

Եւ այս բանիս համար, Ռուսիա ներկայէ աւելի յարմար առիթ մը չկրնար գտնել. երբ Արեւելքի գործերուն իր էն յանգուզն արցակիցը, Անգլիա, այսօր Հարաւային Աֆրիկէի մէջ չափէն աւելի զբաղած է:

Արդէն Միգլո-Ճարտական-դաշնագրին երեւան գալուն առթիւ Եւսաժէնի թէ՛ Ռուսիա այլեւս Ծայր. Արեւելքի մէջ իր ձգտումներուն դէմ լուրջ պատուարի մը կը հանդիպի, ուստի պարտաւորուած պիտի ըլլայ ասկէ վերջ Թ. Արեւելքի համար իր սնուցած ծրարագրին գործադրութիւնը յետաձգելով, իր գործունէութիւնը դէպի մերձակայ Արեւելք դարձնելու Ռուս զեպանին այս վերջին սպառնական դիմումը Սուլթանին, մեր այդ ըսածը եկաւ հաստատել:

ԳՈՒՐՈՒԹ

ՄԱՏՆԻՉ ՎԱՐԺԱՊԵՏԻ ԱՐՏԱՔՍՄԱՆ ԽՆԴԻՐԸ

81 ազգայնոց ստորագրութեամբ հանրագրութիւն մը մատուցուած էր անցեալ չարթու տեղույս Ազգ. վարժարանոց Հոգաբարձութեան, որմէ կը խնդրուէր որ ուսուցիչ լեւոն Սարգիսեանը իր գործած մատութեան համար արտաքսէ վարժարանէն:

Հոգաբարձութիւնը խնդիրը նկատողութեան առնելով, հարկ դատած էր պուլկար կրթական Տեսչին դիմել ու անոր տնօրինութեանը ենթարկել արտաքսումի համար իրենց որոշման գործադրութիւնը: Տնօրէնը հանրագրութեան պուլկարներէն թարգմանութիւնը ուզեր և խոստացեր էր կիրակի օր վարժարան գալ, ուր լեւոն յարգիսեանի արտաքսումը պահանջող ազգայիններէ մէկ քանինքը լսել: Ուստի պատուիրեր էր Հոգաբարձութեան որ հանրագրութիւնը ստորագրողներէ 2—3 անձեր ալ հրաւիրէ: Ինչ որ հոգաբարձունքը չէին կատարած:

Երէկ իմացանք թէ կրթական Տեսուչը կիրակի օր եկած է եկեղեցի, ուր Հոգաբարձունքէն գատ գտնուած է միայն ծանօթ վաշխառու թաղականը, որ երես ունի:

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (2)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՎԱՆԱԿԱՆ...

Երիտասարդը բացաւ ննջարանի պատուհանէն մին ու սկսաւ գիտել տունին ետեւը տարածուող ընդարձակ ու գեղեցիկ պարտէզը: Օդը մեղմ ու անուշ էր: Պայծառ արեւ մը կը շողար ծառերու դեղնած տերեւներու վրայ մեղմադձօրէն:

Այդ միջոցին ննջարանին գոլոր ճոպոց ծխելին վրայ եւ մանկամարդ աղջիկ մը ներս մտաւ:

Մանկամարդ աղջիկը տասնեւթը տարու, բարձրահասակ ձուկաձեւ ու նուրբանգ այտերով, անուշաչուի, աղուոր ու գեղանի էր: Հագած էր

ցած է ըսելու թէ «այդ հանրագրութիւնը ստորագրող 81 անձերը ազգային ու կրթական տուրք վճարողներ չեն, այլ պարզապէս խռովութիւն յարուցանող անկարեւոր անհատներ են. հետեւաբար պէտք չէ անոնց կարեւորութիւն տալ»:

Կրթական Պ. Տեսուչը բմբռնելով ամբաստանութեան ծանուցիլներ, յայտարարած է թէ ինք պարտաւոր է խնդիրը կրթական նախարարութեան տեղեկագրել: Բայց մինչեւ որ պաշտօնական գործողութիւնները կատարուին 2—3 ամիս կանցնի, որով դպրոցականներէլ տարեշրջանը կը լննայ, ու ինքնին Պարգիսեան պաշտօնէ կը դադրի: Իսկ այժմէն դադրեցնելու առաջարկը՝ որ կրնէ ժողովուրդը, գործադրել աշակերտներուն ֆինասակար պիտի ըլլայ: Որովհետեւ, կը յաւելու Պ. Տեսուչը, եթէ 2—3 ամսուան համար նոր ուսուցիչ մը բերուի, աշակերտները ասոր դատաւանդութեան եղանակին՝ և ինք աշակերտներու ընդունակութեան և յատկութիւններուն մինչեւ որ վարժուին երկու ամիս կանցնի, որով ուղղակի աշակերտները կը տուժեն: Ուստի դանձր տղա ֆինասէն փրկած ըլլալու համար, կաւեցնէ Պ. Տեսուչը, ստիպուած ենք 2—2 ամիս յարգիսեանը պահել. ու ես պաշտօնապէս կը կանչեմ ու կը լանդիմանեմ գինք, և կը զգացնեմ թէ հետեւանք իրեն համար ո՛րչափ ծանր կրոյսի եթէ անգամ մըն ալ այդ օրինակ կատարուի քաջ մը առնէ. որով փստահ կրնանք ըլլալ թէ իր պաշտօնավորութեան 2—3 ամիսնեղուն մէջ չը լանդգին դատապարտելի նոր ընթացքի մը մէջ գտնուելու:

Պ. Տեսուչը մասնաւորապէս կը յանձնարարէ Հոգաբարձութեան որ իր այս նկատողութիւնները ժողովուրդին հաղորդէ ու զանի հանգարտեցնէ:

Բաց-կապոյտ չրջադպետ մը, եւ խարտեալ ծածկեր ձգած էր ուսերէն վար փափուկ յորդուով մը: Սիրուն ձակատ մը, քնքուշ գիմաքներ ու մանաւանդ պզտիկ զրգայի բերան մը ունէր՝ որուն թաթ շրթունքները նոր բացուած վարդի կոկոնին պէս կը փթթէին կարծես:

Երիտասարդը այնքան գրաւուած էր պարտէզին հմայքէն որ չսկիզ գուռին ճոցը, հետեւաբար չէր գիտեր թէ իրմէն քիչ մը հեռուն մանկամարդ աղջիկ մը կեցած գինքը կը գիտէր՝ գրեթէ անզգայի կերպով մը յափշտակուած:

Մանկամարդ աղջիկը վերջապէս շատ չկրցաւ սպասել: Մօտեցաւ երիտասարդին:

— Եր խնդրեմ, պարո՛ն, հաճեցէ՛ք նախաճաշիկ մը ընելու, մրմնջեց մանկամարդ աղջիկը կանացի թոթոռն ձայնով մը:

Երիտասարդը սթափեցաւ ու մանկամարդ աղջկան նայեցաւ:

— Ա՛հ, ներողութիւն, օրիո՛րդ... դողդողաց երիտասարդը կիցկուոր չեղտով մը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր

Հաճեցէ՛ք յանուն անկողմնակալութեան ներփակեալ նամակս հրատարակել առաջին աթիւի: Վստահ ձեր անկողմնակալութեան վրայ

Մնամ յարգանքով (Ստրագրուել)

Ուստուք, 8 մարտ 1902

Վարդուն կապը կարած գաղաններու պէս օանձարձակ իր շահատակութիւնները կը գործէ միութեան գաղափարին ու զայն պաշտպանողներուն դէմ:

Եւ ինչո՞ւ չրնէ: Ժամանակները շատ յարմար են: Արտասահմանի հայ ժողովուրդը՝ մեծ ժառամբ զբաղած հացի խնդիրներով՝ գլուխ քերելու ժամանակ չունի: Իսկ այն կուսակցութիւնը որ գինք սնուցած է ցարդ՝ կանխած իր նողկանքը հասարակաւ յայտնելու, աւելի ճիշդ կը վախճայ գինք վաճառելու կուսակցութեան իբր անբարոյական եւ խայտառակ անձ:

Վարդուն ճիշդ այն է յեղափոխութեան մեջ, ինչ որ է տակաւին Վահան վարդապետ տէր Մինասեան կղերականութեան մէջ:

Մենք առայժմ չպիտի գիշանինք իրեն պատասխանելու իբրեւ յեղափոխական մարմին մը ներկայացուցչին, քանի որ մեզի ըսողներ կան կարեւոր Դաշնակցականներէ թէ Վարդուն իր անբարոյականութիւններուն ու խայտառակութիւններուն համար վաճառուած է կուսակցութեան:

Արդ, պատասխանելու համար այն բոլոր բարբառնալիքներուն դարձ...» ի մէջ մտածած է ու դեռ եւս կը մրտէ Վարդո՝ մենք կուզէինք գիտնալ նախապէս թէ անպաշտօն ու վրեժաւոր խայտառակ սրիկայի մը հետ է մեր գործը թէ ոչ կազմակերպուած մարմինի մը ուժն ու փստահութիւնը չարաչար գործածող ու կուսակցութիւնը խաբող սրիկայի մը հետ: Այս բանը գիտնալէ վերջ մեր պարտքն է առաջին պարագային գինք արհամարհել ճշունք կը հաչէ, կարաւանը կանցնի ծանօթ առածը ըսելով. իսկ երկրորդ պարագային մեր սրբազան պարտականութիւնը համարած ենք ի վեր հանել իր բոլոր յայտնի ու հաստատուած խաչողողութիւններն ու սրիկայութիւններն՝ լուսաւորելու հա

մար իր ծոցին մէջ պահող կուսակցութեան աչքերը, եթէ երբէք այն այդ մասին կոյր մնացած է: Ու կը յուսանք թէ նոյնիսկ այդ գործով մենք ազգին ծառայած պիտի կրնանք ըլլալ: Ուստի պիտի խնդրէինք Դաշնակցութեանն որ հաճի հրապարակաւ իմացնել մեզ թէ Վարդուն այսինքն նոյն անձը որ Շարժումի խմբագիրն է՝ տակաւին կուսակցութեան մէկ անգամն է թէ վաճառուած չուն մը: Դաշնակցութիւնը պարտաւոր է այս բանը տեղեկացնել հասարակութեան որպէս զի հասարակութիւնը ըստ այնմ չարժի անոր դէմ: Ու մենք ըստ այնմ իր գրածներուն տանք կարելին:

Մխրեկնակաւ մը

Ուստուք, 8 մարտ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԱՐԻՉ, 19 ՄԱՐՏ

Երէկ երեկոյ՝ մարտի 18ին Բաբիգի գեղեցկագոյն սրահներէն միոյն մէջ տեղի ունեցաւ, վերջապէս Բաբիգի Հայոց բարեգործական ընկերութեան երեկոյթը:

Սրահէն ներս մտնալուս պէս կը չլանանք ելքերտրական լոյսերէն եւ զահլիճի սքանչելի զարդարանքէն: Սրահին գետինը եւ բոլոր պատերը բառին բուն նշանակութեամբ զոցուած են արեւելեան անգին գորգերով, պատերուն վրայ տեղ տեղ գրուած են Արարատ լեռան պատկերները որոց վրայ մեծ տառերով գրուած է ընկերութեան անունը, Պատկերներուն բոլորտիքը կամար կը կազմեն ֆրանսական դրօշակներ: Ամբողջ սրահը լուսաւորուած է հարկաբաւոր ելքերտրական յապտերներով:

Սրահին ամէն կողմերը ձմեռնային տունկեր եւ թուփեր գրուած էին, որոնք պարտէզի մը տպաւորութիւնը կը թողէին հանդիսականաց վրայ:

Երեկոյեան ժամը 8½էն սկսած հայ եւ Ֆրանսացի հոծ բազմութիւն մը սկսաւ խնդալ, մէկ ժամ յետոյ արդէն սրահը գրեթէ լեցուած էր: Մօտ ժամը 9½ին սկսաւ երեկոյթին առաջին մասը, այսինքն կոնցերտը: Այս մասին մասնակցեցան Բաբիգի յայտնի գերասաններէն Պ. Մունէ Սիւլի, Ֆրանսական թատրոնէն, Տիկ. Հէկլուն, Օբերա թատրոնէն, Տիկին Տաֆթէ՝

չուզից այդ մասին ուրիշ հարցումներ ընել:

— Ձեր անունը կըսէ՞ք ինձի, հարցուց երիտասարդը՝ խօսքը բոլորովին փոխելու համար:

Մանկամարդ աղջիկը տոգունեցաւ, աչքերը կուրծքին վրայ դարձուց ու մէկէն ի մէկ չկրցաւ պատասխանել: Կուսական հոգին անզուսպ թրթռումով մը լեցուած էր:

— Կարելի չէ՞ ըսել, նկատել տուաւ երիտասարդը:

— Ինչո՞ւ չէ՞, պարո՛ն, մրմնջեց մանկամարդ աղջիկն իր անուշ ու խանտաղատալի աչքերն երիտասարդին վրայ նետելով: Անունս Լուսիա է:

— Լուսիա... իրա՛ւ, ի՞նչ գեղեցիկ անուն է այդ, չնչտեց երիտասարդը գորովանքով մը:

— Հապա ձեր անունը... վրայ բերաւ մանկամարդ աղջիկը:

— Եթէ ըսեմ ձեզի, կը խոստանա՞ք մէկու մը չյայտնել, ըսաւ երիտասարդը:

— Ամենայն սիրով:

— Խիստ լաւ. անունս Վանական է:

Օրէրա Գոմիքէն, Օր. Սիւզէթ Նիւտոն՝ Ռէքէնթուարէն, Պ. Իվոնէք՝ Բարիգ-եանա թատրոնէն՝ Պ. Պ. տը Պոմէրսի, Ա. վըլին եւն. եւն. որոց ամէնն ալ ընտիր կտորներ արտասանեցին ու երգեցին:

Թիշէնք նաեւ միքանի հայեր որոնք երեկոյթին մասնակցեցան, Օր. Ճա-նըմեան երկու անգամ դաշնակ անեց, Պ. Սինանեան՝ հայ ջութակահար, Պ. Ֆրետերիան՝ երգիչ երկու հայե-րէն երգեր երգեց: Վերջապէս իրր վերջին նիւմբօ պարահանդէսի նու-գիչ խումբը յաղողութեամբ անեց հա-յերեն «Բամբ Որոտան» երգը:

Կէս գիշերը կէս անցած երեկոյթի երկրորդ մասը, այսինքն պարահան-դէսը սկսաւ, Պ. Ալեքսանտրինէ Շեֆ s'Օրշէսքրի ուղղութեան տակ 12 նուա-գածուներ սկսան զանազան պարի ե-ղանակներ անել եւ բաւական թուով զոյգեր սկսան վալսել, փոքրիկ մա-զուրքել եւ այլն:

Պարահանդէսը տեւեց մինչեւ առա-ւօտեան ժամը 5, շատեր դեռ կու-ղէին մնալ պարելու համար, բայց Բարեգործական ընկերութեան գիւա-նը կարճ կապել ուղեց:

Կոնցերտի ժամանակ սրահին մէջ կը գտնուէին մօտ 250-300 հոգի, բայց պարահանդէսի սկսելէն կէս ժամ յետոյ հազիւ 150 հոգի մնացին, ու-րովհետեւ պարել չուզողները կամ չի գիտողները մեկնեցան:

Յիշենք որ երեկոյթի տրուած էր Պ. Տիւթուռնէլ տը Գոնսթանի հո-վանաւորութեան տակ, որ Սարգի ե-րեսփոխանն է: Կազմուած էր նաեւ պատուոյ գումիթէ մը, որուն կը մաս-նակցէին Տիկիններ իշխանուհի Վիս-նիէվաճա՝ նախագահ եւ հիմնադիր խա-ղաղութեան համար կանանց Գաշակ-ցութեան կոմսուհի, տ'Օնէ, պարո-նուհի Տընի Գօշէն, Տիկ. Շասսէն, Տիկ. Արչակ խան, Տիկ. Լէօն պէյ Գափամաճեան՝ իսկ պարոններէն հա-յասէր թերթերու անօրէններն, իշ-խան Գոյիտն Լուսինեան, կոմս տ'Օնէ Նիէվիթի ծերակուտական, Պ. Տընի Գօշէն՝ Սէն նահանգի երեսփոխան, տօթթ. Շասսէն՝ Սէնի երեսփոխան, Կիւսթավ Ռուանէ՝ Սէնի երեսփոխան եւ ժէներալ Արչակ խան, որ արդի նախագահն է Բարիգի Հայոց Բարե-գործական Ընկերութեան:

Մեր իմացածին համեմատ երեկոյ-թին հասոյթը բաւական գոհացուցիչ է եղեր, կը կարծուի թե առնուազն

2000 ֆրանք մը շահ պիտի մնայ ըն-կերութեան:

Թուրք ուսանողները—որոց ամա-կանր ըսինք թէ կտրուած է կառավա-րութեան կողմէն—որոշած են չվերա-դառնալ Կ. Պօլիս, եւ ասոր համար երկու օր առաջ ժողով մը կազմելով, Ուսանողական Միութիւն մը կազմե-ցին, զիրար քաջալերելու եւ ինչ որ ալ պատահի Բարիգ մնալու, հոն ի-րենց ուսմունքն աւարտելու համար: Մինչեւ օրս թուրք ուսանողները Ու-սանողական մարմին մը ուստի եւ կեդ-րոնատեղի մը չունէին եւ կամ եթէ ժամանակին ունեցած էին քանդած էին, ամսականի խնդրոյն առթիւ ան-միջապէս թէ մարմին մը կազմեցին եւ թէ կեդրոնատեղի մը վարձեցին:

Մելիք Ս. Դաւիթ-Բեկ

ԲՆՈՒՆՏ, 7 Մարտ

Տեղւոյս հայերէն Ներսէս Տէր Ստե-փանեան (Ներսիկացի) որճագործ, նա-մակ մը գրելով Քէօստէնէ, Բայուցի Միգրտիչ Իսրաէլեանի հոս կրկանչէ իր քով աշխատելու համար: Միգրտիչ անմիջապէս կուգայ, բայց զինք կան-չող անխիղճ միայն ամսական հինգ ֆրանք տալ կուզէ: Միգրտիչ կը ստիպ-ուի ծածուկ ծախքը ուղեց որ կրկին Բէօստէնէ վերադառնայ: Ներսէս Տէր Ստեփանեան՝ որպէս զի անոր ճանա-պարհածախսը չվճարէ, զանի կառա-վարութեան կը մատնէ իբրեւ յեղա-փոխական եւ առանց անցագրի եկած մէկը: Այսօր չորս օր է որ բանտար-կուած է ու բանտին մէջ կուլայ, կարտասուէ: Վախ ունի որ զինք Թուրքիա զրկէ Ռուսիոյ կառավարու-թիւնը: արդէն իր լուսանկարը հաներ են իր այս վախը շատ անտեղի չեքե-ւար:

Ուստի նոյնիսկ իր աղաչանքին վրայ կը խնդրեմ մեր ուսմանաբնակ աղգա-կիցներէն, որ այս խեղճ աղաքելու մէկ միջոցը խորհին: Տեղւոյս Հայերը միջամտեցին, բայց ոստիկանութիւնը բաւ թէ դուք մի խառնուիք, այս գոմիթէի մարդ է: Ոստիկանութիւնը դեռ չէ յայտնած թէ ո՛ր պիտի զրկէ զանի:

Անցողի

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պուրկարիոյ Անցելու Հովի-րեր Տ. Բարթուղիմէոս Ծ. վար-դապետ Պաղճեան ժամանակէ մը ի վեր տկարացած բլլալով, իր պաշտօնավարութենէն ձեռնթափ լինելը բացատրող գրութիւն մը զրկուած է Ֆիլիպէէ Պատրիար-քարան, խնդրելով որ տնօրինու-թիւն մը բլլայ: Այս խնդիրը խառն ժողովոյ յառաջիկայ նիստին նկատ-առմանը յանձնուած է:

— Վանայ մէջ գտնուող Հայ հռոմէականները բաւական մեծ նպաստ մը ստացեր են վերջերս Հռոմէն: Մուշի Հայ-հռոմէակա-նաց Առաջնորդ Տ. Ներսէս Եպս. Ճնտոյեանի իրաւասութեան ներ-քեւ կը գտնուի Վանայ նորակազմ թեմը, որուն հոգեւոր վարչու-թիւնն յանձնուած է Մնտոն վար-դապետի, Վանայ Արքեպիսկոպի-տի մէջ բնագարծակ պարտէզ մը գնուել է, ուր պիտի շինուի Հայ-հռոմէա-կանաց Առաջնորդարան, եկեղեցի-ւ գարոց: Կըսուի թէ հրաման տրուել է որ Հայ-հռոմէականներ-ը անուամբ բացուած բոլոր նա-խադրութեաններու տնօրինութիւնը ֆրանսացի թեմերէն փոխանցուի Հ. Մնտոնի, որ մտադիր է եղեր Միթիթարեան բարձրագոյն վար-ժարան մը բանալու: Ֆրանսացի թեմերն ալ իրենց հաշուին բնագար-ծակ տուն մը պիտի գնեն եղեր մօտերս գարոցի վերածելու հա-մար:

Բիւզանդիոն

— Վառնայի յիշատակներն. Գործ. Ժողովուս նուէրներ ստացած է հետեւեալ Պատ. ազգայիններէն, եւ կուգայ հրապարակաւ իր շնորհակա-լութիւնը յայտնելու: Տ. Հրանդ ձի-լաճեան 5 ֆրանք փոխան հարսանիքի ծաղկեփունջի ի Պալլէք: Տ. Անտրէաս Կոչկակարեանի միջոցաւ՝ Ոմի 1 ֆրանք: Ռուսչոքի ընթերցարանի տասնամ-եակի առթիւ հանդիսականներէն հա-ւաքուած 22-40 ֆրանք: Տ. Տ. Խ. եւ Որդիք Տամատեանէ հարսանիքի առ-թիւ 31-30 ֆրանք: Տ. Տիգրան Տէօվ-

լէթեանէ իր տօնախմբութեան առ-թիւ 2 ֆրանք: Տ. Համբարձում Մա-միկոնեանէ վախճանաւ Բարեգոցի Մանուկ Գրիգորեանին ունեցած տա-լիքին փոխարէն 1-30 ֆրանք: Տ. Թ. Գուրպէթեանի միջոցաւ Տ. Տ. Պ. Մարգարեանէ եւ Յ. Սրուանձեանցէ 5 ֆրանք՝ ի Սիլիստրէ:

Արդ զուգար 68 ֆրանք արծաթ: Լիւսիոյս եւք թէ՛ ամեն պարտաճա-նաչ ազգայինք ի նկատի ունենալով թշուառ որբերու վիճակը, սիրայօ-ժար պիտի հետեւին յիշեալ Պատ. նուիրատուաց բարի օրինակին:

Մնաթ յարգանք

Ի դիմաց Գործ. Ժողովոյ

Ատենադպիր Ատենապետ Յ. Կ. Ճանկիլիւսեան Գ. Մանսրճեան Վառնայ, 11 Մարտ 1902

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Գեղ. Ուիլիսի բաժանորդաց մեծամաս-նութիւնը մեզ կ'իմացնէ որ իւրաքան-չիւր թերթ ազատ ու պատուած ձեռ-քերնին կը հասնի, կամ բնաւ չհաս-նիր: այս անտեղութեան առջեւն առ-նելու համար, կը յայտարարենք մեր պատուական բաժանորդաց որ ասկից վերջը թերթերը կը պահենք եւ տար-ւոյն լրանալուն ամենք ի միասին հաստատուն ծրարով եւ ապահովա-գրած կը յղենք: իսկ եթէ բաժանորդ-ներէն ոմանք կը փափաքին ամէն եր-կու ամիս ստանալ պրակներն, անոնց կը ծանուցանենք որ թերթը մաքուր եւ ապահով իրենց հասցեներու համար իբրեւ գին ապահովագրութեան եւ հաստատուն գլանի, բարեհաճին մեզ յղելու 2 ֆրանք կամ 1 ռուբլի: Այս կերպով Գեղարքիին տարեկան բաժնե-գինն կըլլայ 5 ֆր. կամ 2 ռուբլի:

Քանի որ խմբագրութիւնս այդ գեղարուեստական թերթի մաքուր եւ գեղեցիկ տպագրութեան համար ամէն ջանք կը թափէ, կը փափաքինք որ բաժանորդ եւս մաքուր ու գեղեցիկ ստանան իրենց թերթերն, որպէս զի մեր մէջ կարողանաք տարածել գե-ղեցիկն ճաշակը եւ մշակելու հայ գե-ղարուեստի ճիւղը: Յաջորդ թերթերը զուտ հայկական գեղարուեստի հետա-քրքրական նիւթերով կը պատրաս-տուին:

ԽՍԲ. ԳԵՂԱՐՔԻ

— Վանական...

— Այո՛:

— Ինչպէ՞ս, պարո՛ն, միթէ՞ հայե-րու մէջ Վանական անունով մարդ կըլլայ:

— Իրա՛ւ էք, ատանկ անունով մարդ մը չըլլար, բայց պատճառով մը եղած է: Ժամանակին մայրս զաւակ չունի եղեր, ատոր համար Վանքե-րուն գիմած է ու զիս անոնց նուիրած է: Երբոր Ատուած մօրս ձայնը կը լսէ եւ զաւակ մը կուտայ իրեն, անիկա իր խոստումը կատարելու համար ա-նունս Վանական կը գնէ:

Լուսիա լուց ու երբէ՛ք առարկու-թիւն մը չըրաւ:

— 2է՛ք հաւատար ըսածիս, վրայ բերաւ երիտասարդը հանգարտ բայց անուշ ձայնով մը:

— Ի՞նչու չպիտի հաւատամ, պա-րո՛ն, մըմնջեց Լուսիա՝ ի՞նչ պատ-ճառ ունիք սոստ խօսելու: Միայն թէ զարմանք եղաւ այդ անունը լսելու: Յետոյ իր տրամալի աղու որ աչքերը դարձնելով երիտասարդին վրայ:

— Դուք հեռո՛ւ տեղէ եկած էք, պարո՛ն, հարցուց Լուսիա:

— Այո՛, Պարսկաստանէն եկած եմ, Օրիո՛րդ, պատասխանեց երիտասա-րդը:

— Ի՞նչոք ունի՞ք:

— Ոչ մէկը չունիմ:

— Ազգականներ...:

— Ազգականներ ալ չունիմ:

— Բնիկ Պարսկաստանի՞ էք:

— Ո՛չ, Տիգրանակերտցի եմ:

— Ծառո՞նց է որ ծննդավայրէջ հե-ռացած էք:

— Մօտաւորապէս 22 տարի կըլլայ:

— Ո՛հ, Աստուած իմ... ի՞նչ ցա-ւալի բան: Ձեր ճակատագիրը հօրս ճակատագրին պէս սեւ է եղեր:

— Իրա՛ւ է... տխուր խոստովանու-թիւն մըն է այս:

— Լա՛ւ ուրեմն, ինչո՞ւ չէք երթար հայրենիքդ: Կարելի է հօրենական ի-րաւունքներ ունիք այնտեղ:

— Ո՞վ հօրենական իրաւունքներ կրնայ ունենալ այս երկրին մէջ: Միթէ օրէնք կա՞ որ իրաւունք ալ ըլլայ մեզի համար:

— Ինչպէ՞ս, պարո՛ն, ո՞վ կարգիլէ որ դուք ձեր հօր ունեցածներուն տէրը չըլլաք:

— Ի՞նչ ըսեմ... մըմնջեց երիտա-սարդը հառաջելով:

Մանկամարդ աղջիկը՝ երբ նշմարեց որ երիտասարդը խորին թաղմութեան մը մէջ ինկաւ, ա՛լ հարցում մը չըրաւ: Սեղանին սպասները վերցուց եւ խնդ-րեց որ հիւրանոցն երթայ:

Երիտասարդը՝ հիւրանոցը մտաւ, որ բաւական չքեղութեամբ զարդարուած էր:

Ի՛նչ յետոյ փոքրիկ սիրուն ափսէի մը մէջ քանի մը խնձոր, մալազի տանձ եւ ծիրանի ջիւր դրած՝ Լուսիա երիտասարդին բերաւ:

— Հրամիցէ՛ք, պարո՛ն, ըսաւ Լու-սիա:

— Ծնորհակա՛լ եմ, պատասխանեց երիտասարդը:

— Թերեւս լսած էք թէ Արտամետ գեղին մէջ ինչքա՛ն համով խնձորներ կան, պարո՛ն, նկատել տուաւ Լու-սիա անուշ արտայայտութեամբ մը, այնպէս չէ՞:

— Այո՛, լսած եմ:

— Ահա՛ այդ խնձորը:

Ու ափսէին մէջէն աղու որ խնձոր

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍՍԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԳԻԱ

Սթանպոլտան պաթեկերաֆ ա-
թիտէքի Վալիւմաթ վերիւրի տիրո՛ւ
«Շաէաթա պինաէն, սապըգ
Մաքէտոնիա գոմիթէսինին րէյիսի
Պօրիս Սարաֆօֆ խաֆիէն Մա-
քէթոնիայա կէշմիշ վէ չէթէլէր
իլէ սազլանմագտա օլուպ, իւք
պահարտա իխթիլալ գալտորաճագ
ըմըշ, էյիլէրին էքսէրիսի, պա-
խուսուս րուսիա վէ ինկիլթէրա՛
էյիլէրի, Պապը Ալիյէ միւրաճա-
ւթ իթմիշ օլուպ, մէգքիւր չէ-
թէլէրի տաղըթմագ վէ տէֆ իթ-
մէք իչիւն թէտապիրի յազրմէի
իթթիխագ իթմէսինի թափսյէ
իթմէքիւ պէրապէր, իսլամ էհա-
լիի խրիսթիանայրա գարշը թէշ-
վիգ վէ թահրիգ իթմէսինի
թէնպիս ու իխթար իթմիլէր :

Թէվգըֆ բաշա ճէվապէն՝ հէր
իխթիլալ ու իսեանը տէֆ ու թէս-
քին իտէպիլմէք իչիւն տէվլէթի
Օսմանիյէնին օրատա մրգտարը
քիաֆի նիզամի ասքէրի մէվճուտ
պուլընտըղըն էյիլէրէ պէյան
իթմիշ տիր :

— Էրքեանը հարպ րէյիսի սա-
նիսի նազիմ բաշանըն մուհաքէ-
մէսի իճրա օլունմըշ. ֆազաթ իւ-
զէրինէ հիշ պիր ճիւրմ թէպէլիւն
օլընմատըղը կիպի, Ֆուատ բա-
շայա ֆաիլի միւլթէրէքօլմա տըղը
տախի աշխաշըլմըշ տըր : Պու ճիւլի
իլէ պէրապէր, նազիմ բաշայա
պիր թէվիգճի նազարը իլէ պա-
զըպ, անը սիլքի ասքէրիլէտէն
իխրաճ իտէրէք, միւլթիյէ մէմու-
րիյէթինտէ իսթիխտամ իթմէք,
վէ Սթանպոլտան տախի իրագ
պուլընտըրմագ իչիւն թաշրատա
վալիլիք, եա միւլթէսարթիլըգ մէ-
մուրիյէթինէ թալին էյլէմէք գա-
րարը վէրիլմիշ տիր :

— Եանեայա եագըն Ֆիլիատիս
նամ մահալտէ թիւրք ասքէրիլէրի
վէ 200 Արնավուտար պէնինտէ
չէտիտ վէ գանը պիր գափկա վու-
գու պուլմըշ տըր : Արնավուտար
մահալուս պուլընտէ պիր հօճանըն
թախիլիյէսինի իսթէրիլէր իտի :

Ֆիլիատիստէքի զափկատա պիր
չօգ զապիլիլէր էօլմիշ օլտը-
ղընը, վէ ասքէրիլէր մաաշ ալմա
տըղարը սէպէպլէ Արնավուտ-
արըն իւզէրինէ եիւրիւմէք իսթէ-
մէտիլէրինի տիկէր պիր թէլէ-
կըաֆ պիլտիրմիշ տիր : Արնա
վուտար չիմտի վալի Օսման բա-
շանըն աղընը իտտաա իթմէքտէ
իմիլէր :

— Ֆուատ բաշանըն քիւրտ վէ
արնավուտ խատէմէրիլին մուհա-
քէմէսի տախի իճրա օլընուպ, 15,
10 վէ 5 սէնէ մահալուսիլէթէ մահ-
քիւմ օլմըշար :

— Ախիւրէն Սթանպոլտա մահ-
պուս օլընտէ զապիլէրին մըգ-
տարը 164է պալիլ օլուպ, պու-
լարըն պէշի ժէնէրալ տըրար :

— Պապը Սերասքէրտէն չըգան
սօն էմիր իւզրէ, թիւրք զապիլ-
լէրէ էվրօպալարըն տախիլէրինէ
վէ օնլարըն էյլէնճէ մահալլէրինէ
կիթմէք վէ օնլար իլէ մինասի-
պէթտէ պուլընմագ գաթիլէն մէնն
օլընմըշ տիր :

— Պապը Ալի էվրօպա տէվլէթ-
լէրի նէգտինտէ պուլընտէ օսմանլը
էյիլիլէրինէ սիրքիլէր-թալիմաթ
եօլլալուպ, Մահպուդնիտաա իսթի-
լալ ու իխթիլաշա մէյտան վէրմէ-
մէք իչիւն՝ Պուլկար հիւքիւմէթի-
նին Մահիթնիտա գոմիթէսինի
զապիլ ու թէսքին իթմէսի պա-
պընտա էվրօպա տէվլէթիլէրինին
Պուլկարիլալ իճպար իթմէլէրինին
իգթիլգսընը կէօսթէրմիշ տիր :
Թիւրք էյիլիլէրի պու թալիմաթ
իւզրէ, էվրօպա գապիլէրինէ
միւրաճաաթիլար իտէճէք տիրէր :

— Ջէլթոնտա եէնի պիր գա-
րաղօլիտանէ եաթմագ իչիւն Սուլ-
թան իրատէ իթմիշ տիր : Սթան-
պօլ կազէթալարըն պէյանընա կէօ-
րէ, մէգքիւր պինայա 22000 զըշ-
մէսարիֆ քէշֆ օլընմըշ :

— Իքի տտէտ եէնի հարպ սէ-
ֆիլէսի (գուուաղէօր) եաթարրի-
մասընը Սուլթան պահրիլէ նազը-
րընա էմր ու իրատէ իթմիշ տիր :
Իչպու եէնի վարօրարըն Ալման
թէրսանէսինէ սըբարըշ օլընա-
ճաղը մէսուուաթտան տիր :

— Հոֆիա-Շամ չըմէնտիֆէր
խաթթընը՝ 155000 ինկիլիգ լի-
րասընա մուգապիլ՝ ինկիլիգ չիւքէ-
թիլտէն սաթիւն ալընմասընը տա-
խի Սուլթան իրատէ իթմիշ :

Ի Ռ Ի Ս Ի Ա

Բէթրապուրկտան վիէննա կա-
զէթալարընա վերիլէն թէլէկրաֆ
լար՝ եէնի իսթիլալ չըգարմագ ի-
չիւն իլաննամէլէր տաղըրտըղընը
պիլտիրմիլէր տիր : Իչպու իլան-
նամէլէրին պիր թագրմը ճիւլհու-
րիլէթ թէշքիլինի իտտաա իթ-
մէքտէ, պիր թագրմը իշճիլէրին
հուգուզընը մուհաֆազա էյլէմէքտէ
վէ տիկէր պիր գըսմը տախի աս-
քէր զապիլլէրէ իսթապէն եա
ղըրուպ, էհալինին իւզէրինէ աթէշ
իթմէք էմրի վէրմէլէրինի թէն-
պիս էյլէմէքտէ իմիշ :

Նիհայէթ մէգքիւր իլաննամէլէր
Մարտ 16տա էօլլէնտէ էհալիի
Նօվսքիլէ տալէթ իթմիլէր տիր :
Իլաննամէլէր բօսթա իլէ եօլլա-
նըրմըշ օլտըղընտան, չօզարըր ա-
րէսիլէրինէ թէսլիմ օլընմագտան
էվլէլէ հիւքիւմէթտէն թօթլանըլ-
մըշ :

— Շու կիւնլէրտէ րուսիտա
էն զիյատէ էֆքեարը ումուլիի
մէշղուլ իտէն միւրալալ կրիմին
խրիանէթիլք մէսէլէսի տիր : Պու
միւրալալ վարչապիա օրտուկեա-
նընտա քէնտի էհէմրիլէթիլ մէսլէ-
լէքիլտէն միւլթէնաշի՝ օրտուլըն
պիլթիւն հարպ բըլանլարընը Ալ-
մանիայա Պիլտիրուպ, մուգապի-
լինտէ քիլլիլէթիլ ազճէ ալըր
ըմըշ :

Իճրա օլընտէ թահգիգաթտան
վէ քէնտի խանէսինին կիլիլ պիր
մահալլինտէն պուլընտէն էվրազլար-
տան անլաշրլտըղը իւզրէ, մէր-
գուլ օն սէնէտէն պէրու խէպա-
սէթիլտէ՝ տէվլամ իտէր իմիշ :
Քէնտիլտէ՝ էճնէպի տէվլէթիլէրին
հարպիլէ սըրլարընա ակեհաշ օլմագ
մէմուրիլէթի իլէ միւլթէլլէֆ օլտը-
ղընտան, ուզուլն միւրաթէթ հար-
պիլէ նազըրընը չիւհէսի իւզէ-
րինէ տալէթ օլընմամըշ, Նիհայէթ
քէնտիլտէն րէֆիգ վէ ալէաթ օ-
լան պիր գատընա վատ իթտիկի
ազճէլի վէրմէտիկիլտէն տօլալը,
գատըն անը էլէ վէրմիշ տիր :

Միւրալալ կրիմէ շէրիքի ճիւրմ
օլմագ չիւհէսի օլընտէ պազըր գա-
պիլլէր վէ իւշ գատըն տախի
թահգիգաթ ալթընտա պուլըն-
յօրլար, կրիմին միլլիլէթի ալման
օլմաղլէ, «պէն միլլէթիմէ պիր
խրտմէթ իթմէք իչիւն րուս բլան-
լարընը Ալմանիայա սաթմըշմը»
տէյուպ իթթիլալ ճիւրմ իթ-
միշ տիր : Նիհայէթ մահալիստէ
թէլէլէֆի նէֆա իթմիշ տիր :

ՍԵՐՊԻԱ

Բրէնա Ալէքսի Գարակէօրկէվիշ
թաւնա պիր թէքքիպնամէ վէրուպ,
կէշէն հաֆթա եազտըղըմըգ իւզրէ
Շապագտա վուգու պուլան Ալա-
վանտիշ մէսէլէսինտէ աալա քէնտի
մէտիլէի օլմատըղընը վէ մէգքիւր
վուգուաթըն տիվանէճէ պիր հա-
րէքէթ օլտըղընը պէյանլէ, իշտէ
սըրպ հիւքիւմէթիլին թարմաղը
պուլընտըղընը սէօլլէմիշ տիր :

Պ Օ Է Ր Լ Է Ր

Թրանսպալ ճուլհուրիլէթ րէ-
յիսի Մ. Քիւլկէր սօն պիր միւ-
լազաթտա մուհարէպէտն տօլալը
շու մաալտէ պէյանըն էֆքեար էյ-
լէմիշ տիր : «Պիլ մուհարէպէյէ
պաշլամասընտան էվլէլ նէ իւմիւտ
վէ էֆքեարտա պուլընտըրագ իսէ
չիմտիտէ ալնը էֆքեարտալըգ
սէրպէստիլէթ վէ իսթիլալիլէթի-
միլտէն հիշ պիր չէլ թէնզիլ իտէ-
մէլիլ. մուլինիմիլ Ալլահ տըր :

Մ Ի Ի Թ Է Ն Է Վ Լ Ի Յ Է

Իթալիա գրալը վէ գրալիցասը
եագընտա իմբէրաթօր վիլիլէլմէ
զիլարէթ իտուպ, սօնրա Ջար իլէ
տախի կէօրիւշմէք իչիւն Բէթրա-
պուրկա կիտէճէքէր :

Ֆազաթ սօն պիր թէլէկրաֆ
Բէթրապուրկա կիթմէլէրինի թէք-
զիպ իտիլօր :

— Սըրպ մէլիսի մէպուսանը
էքսէրիլէթի ալն իլէ գապիլէյէ
էմիլիլէթի պէյան իթմիշ օլ-
մաղլէ, րէյիս Մ. Վոլիշ հէլէթի
վիւքէլանըն իսթիլալալըն կէրի
ալմըշ տիր :

— Ֆրանսա վիւքէլա րէյիսի
ֆալթօլիլէ կէշէքէն թրանսպալ
չարբըրուպ աղըրճա եարէլէնմիշ օ-
լարագ, մահալի մէմուրիլէթիլէ կի-
տէմէյօր վէ գօլու սագաթ գալա
ճաղըր գանն օլընյօր :

— Ալմանիա վիւքէլա րէյիսի Գօնթ

Պիւլօլըն վէնէտիկէ կիթմիշ օլ-
տըղը Պէրլինտէն պիլտիրիլմիշ
տիր :

— Ջին ասըլարը ասքէրի զա-
լէպէ իթմիշ վէ ֆիւն Ջաուըր
զապիլ էյլէմիշ տիրլէր : 20000 աա-
քէր ասըլարըն թարաֆընա կէշ-
միշ տիր : Քուանկ-Սիտէ տախի
ասըլար արթմագտա օլուպ, թալ-
բինկ միսլիլա էթրաֆը իսթիլա
իտէճէքէրի ֆէհմ օլընյօր :

— Ջինին վէ Գօրէնըն հալը
հաղըրընը մուհաֆազա իթմէք
մագսէտի իլէ թանգիմ օլընմըշ օ-
լան ինկիլիլգ-Ճաբոն ահտնամէսի
իչիւն րուսիա վէ Ֆրանսա միւլթ-
թէֆիգ պիր պէյաննամէ չըգարուպ,
մէգքիւր ահտնամէսին ահքեամը
քէնտի արգուլարընա միւլթապըգ
օլտըղընը պէյան էյլէմիշ տիր :

«Բիլաֆ օլմատը իսէ լաբայա
չէվիլ» տարպը մէսլէ տիր :

— Իմբէրաթօր Ֆրանց Եօզէ-
ֆին տախի պու եաղըն Սըբալտա
Ջար իլէ կէօրիւշմէքէլինի վիլէնա-
տան եագըրյօրար :

— Բաբանըն չախի գաստըն-
տան 400,000 ֆր. չալմըշ օլմագ
ճիւրմիւ իլէ վատիկան մէմուրալ-
րընտան 3 քիշինին մուհաքէմէսի
րոմա մահքէմէսինտէ պազըլը-
յօր : Բարիլա կազէթասընըն պէ-
յանը իւզրէ, սըրպաթ օլընտան
մէպալգ 8 միլիոն ֆր. օլուպ, պու
ազճէնին պէօլիւք գըսմը Բաբա-
նըն քէնտի սէրվէթի իմիշ :

ԾԱՆՈՒԻ ԳԻՐԳԵՐ

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ Կամ ՄՐՄՈՒՅ ՀԱԹ-
ԿԱԿԱՆ : Այս երգարանը Բ. անգամ
տպագրուելով աւելի ճոխացած ու բա-
րեւիտուած է, եւ հակառակ գնոյն
աժանութեանը կը պարունակէ ազ-
գային հին ու նոր գրքիլէր ըրոյր եր-
գերը : Գին 1 Ֆր.

ՆԵՏԱ Կամ ՄԱՄԻՍ ՊԱՏՄԱՆԸ,
Պուլկարիլալ ազատութենէն առաջ
Պուլկար ժողովուրդին թուրքերէ կը-
րած տառապանքները ու անոնց նիստ
ու կացը կը պատկերացնէ : Գին 50 ՍԱՆԹ.

ՀԱՅՐԵՆԻԳԻ ՉՈՂԵՐ : Պատկեր մը
Տաճկահայաստանի իրական կեանքէն,
գրեց Ղ. Նահապետեան : Գին 1 Ֆր.

Այս գիրքերը ստանալու համար
պէտք է գրիլ Իրաւունքի խմբագրու-
թեան, բօսթի ծախքը 10ական
սանթիմ միատեղ զրկելով. իսկ գիր-
քերու արժէքին համար, եթէ ուրիշ
գիւրուլիւններ պակսին, կընդունուի
նամակագրօշ 10 0/0 զեղչով :

Յ. Պ. ՃԱՆՆԻԻԼԵԱՆ

Յանձնակաւար

Պատիւ ունիմ պատ. ազ-
գայնոց յայտարարելու թէ՛ վառնայի,
Շուվայի եւ Ռուսիոյ մէջ յանձնա-
կատարութեան երթիւնկութեան սկսած
եմ, անպայման վստահուլին, ապ-
րանքներու գինները խիստ զիւրաճա-
չելի եւ յանձնարարութիւնները պիտի
կատարուին արագ եւ շատ ճշգրութեամբ :
Հասցէ՝

Յ. Կ. ՃԱՆՆԻԻԼԵԱՆ

Վառնա

Իսկ Ռուսիոյ մեր կեցողութեանը կէ-
րպիւսեան եղբարց խանութը :

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна